«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/147

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2025 թ. N 147

«ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 40

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում
2 /երկու/ տարի ժամկետով, 14 ապրիլի 2023 թ. N 83

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի դեկտեմբերի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 31 հոկտեմբերի 2024թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 18 մարտի 2025թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 16-18-ը ապրիլի 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 10 հուլիսի 2025թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 06 հոկտեմբերի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Գագիկ Քթրյան՝** Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Որակի ապահովման բաժնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար
- **Քանաքարա Հայրապետյան՝** Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ
- **Նարինե Հովհաննիսյան՝** ՀԱԱՀ-ի Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ
- **Հարություն Չիլինգարյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի անդամ՝ ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Քոլեջն իրականացնում է ՈԱԾ 5-րդ մակարդակի կրթական ծրագրեր, որոնք համահունչ են հաստատության առաքելությանը: Նախորդ հավատարմագրումից հետո կրթական ծրագրերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են՝ հաշվի առնելով գործատուներից ստացվող հետադարձ կապը: Ձևավորվել է ՄԿԾ-ների մշտադիտարկման գործընթաց, իրականացվում են համեմատական վերլուծություններ այլ հաստատությունների ծրագրերի հետ, ընդլայնվում է պրակտիկաների կազմակերպման շրջանակը: Ուսուցման հիմքում դրված են ակնկալվող ուսումնառության արդյունքները, գործում է բազմագործոն գնահատման

համակարգ, դասախոսներն ունեն մեթոդների ընտրության ակադեմիական ազատություն: Միաժամանակ **որակավորումների արժանահավատ շնորհման** համակարգային երաշխիքները պահանջում են լրացուցիչ ամրապնդում: Պրակտիկայի օրագրերի միասնական ձևաչափ սահմանված չէ բոլոր մասնագիտությունների համար, իսկ ուսանողական աշխատանքները չեն կրում հետազոտական բնույթ: Դասախոսների մասնագիտական զարգացման և օտար լեզվի կարողությունների ամրապնդման ուղղությամբ անհրաժեշտ է մշակել հստակ ծրագիր՝ կրթական ծրագրերի մրցունակության բարձրացման նպատակով: Քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո իրականացրել է ենթակառուցվածքների արդիականացման քայլեր՝ ստեղծելով և վերազինելով ուսումնական կաբինետներ և լաբորատորիաներ, զարգացնելով գրադարանային ծառայությունները, որոնց թվայնացման գործընթացը սկսված է: Պրակտիկաների իրականացման համար օգտագործվում են նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները:

II. Քոլեջում գործում է ռազմավարական ծրագիր և պլան-ժամանակացույց, կառավարման մարմինները ձևավորված են և իրականացնում են իրենց գործառույթները: Առկա է որոշակի առաջընթաց ռեսուրսների, հաշվետվողականության և արտաքին կապերի զարգացման ուղղությամբ: Միաժամանակ **արդյունքահեն կառավարման** մեխանիզմները լիարժեք չեն գործում: Չեն սահմանվել արդյունավետության հստակ ցուցիչներ, տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը համակարգված չեն, իսկ ռազմավարական նպատակների և իրական քայլերի միջև կապը բավարար չափով չի արտահայտվում: Որակի ապահովման համակարգը փաստաթղթային հիմք ունի, սակայն այն դեռևս չի գործում որպես տվյալահեն և կառավարչական որոշումներ ձևավորող գործիք: Նախորդ հավատարմագրումից բարձրացված մի շարք խնդիրներ ամբողջությամբ չեն լուծվել: Այս պայմաններում կառավարման համակարգը գտնվում է զարգացման փուլում և պահանջում է համակարգված ամրապնդում՝ արդյունքահեն և որակին ուղղված գործարկման համար:

III. Զարգացման հաջորդ փուլում նպատակահարմար է.

- ապահովել ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության ակտիվացում՝ անցնելով նախնական փուլից համակարգված զարգացման՝ սահմանելով հստակ նպատակներ և չափելի արդյունքներ,
- մշակել և իրականացնել մարդկային ռեսուրսների զարգացման միջոցառումներ՝ ուղղված կառավարման կարողությունների ամրապնդմանը,
- ինստիտուցիոնալացնել որակի ապահովման գործառույթը՝ ձևավորելով կայուն որակի կառույց և մեկ տարվա ընթացքում ներկայացնելով դրա գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն,
- բյուջետային պլանավորման գործընթացում հստակ ամրագրել ռազմավարական ծրագրի առաջնահերթություններին ուղղված ծախսերը և ապահովել դրանց հաստատումը Կառավարման խորհրդում,
- իրականացնել դասախոսների մասնագիտական զարգացման ծրագիր՝ ներառյալ օտար լեզվի վերապատրաստման դասընթացներ և որակավորման շարունակական բարձրացման միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., դեկտեմբերի 10